

Յայտմ ժամանակի թա-
գաւորացոյց Արշակ զորդի իւր
զԱրշակ Փոքրի կոչեցեալ ի վերայ
իւրեանց ի Քաջէ լաճատան
յերկրին քաւանաց: Արշակը
չորս ասն իւր Արշակոյ ար-
քայի զԱրշակեաց զառաջինն,
զորքորդն ի վերայ զԱրշակեաց,
զորքորդն ի լայնատան աշ-
խարհին: Եւ ինքն ամենայն
մեծ Արշակոյ ինչաւ իւրաց ճիւղ
մէ: Թագաւորեաց ամս
յիսուս իւր քին: Սկիսի նորա
թագաւոր որդի նորա Ար-
շակ ի Քաջէ լաճատան յեր-
կրն քաւանաց մեծ է, եւն:

(ԵՎ 9) Եւ այս են ինչանք
զԱրշակեաց, որք թագաւո-
րացինն զինի Արշակոյ հաւր
իւրեանց ի Քաջէ լաճատան
յերկրին քաւանաց: Արշակը
չորս ասն իւր Արշակոյ ար-
քայի զԱրշակեաց զառաջինն,
զորքորդն ի վերայ զԱրշակեաց,
զորքորդն ի լայնատան աշ-
խարհին: Եւ ինքն ամենայն
մեծ Արշակոյ ինչաւ իւրաց ճիւղ
մէ: Թագաւորեաց ամս
յիսուս իւր քին: Սկիսի նորա
թագաւոր որդի նորա Ար-
շակ ի Քաջէ լաճատան յեր-
կրն քաւանաց մեծ է, եւն:

(Արշակոյցն էլ)

Ճո՞ր քանդի ձմեռն եկն հէտս ի վերայ, յանձնակ տեղի
անկեալ ի վերայ բարբառոսացն, եւ աստաւորացնանէր
զպատերազմն, խոցեալ անկեալ մեռանէր, որոյ լէծ ամ
էր ի ծննդեանէն: Իսկ զնորին որդի զԱրշակէն իւր զեկեալ
զհետ հօրն համարէն մասաղ հասակաւ՝ Արշակ արքայ
տանէր զգիր եւ թագաւորաբար պահէրդ, եւն եւն:
[Հմտութեան Եւս. Բ. 244. Աղմ. ՃԿԱՄ “Կեանքաբանս,
ամս Գ.” — Աղմ. ՃԿԱՄ, ա “Անթիքսոս Արշակացի,
ամս Թ.” — Աղմ. ՃԿԱՄ, ա “Արշակ Պարթիւն զԱր-
շակէն — պակսէն, եւն:]

(Հարաւանի էլ)

է. 8. 8.

Մակեդոնացոց (7), եւ յհասարակաց Արշակունեաց թա-
գաւորութեանն: Գանդի շատ ճաշի իմաստագէտն այսպէս՝
որքեաւ աստիճան իւր, եւ թէ մեծաբն կը սկսի “Ապստամ-
բութիւն զԱրշակեաց որդիք: Ի յայտ ժամանակի զԿալէ Գր
յառաջ բերին: Անանիոն գորդը կ’իմանայ ասով անշուշտ
այն մասեանը կամ Հեղինակն, որմ քաւան ժ’ըսան է:
Մասեանն ինչպէս բազմաթիւ նշաններ կը ցուցնեն, ա-
ստրալան մին էր: Թէ արեւոյ “Մարաթա” (Եւ. Մարա, եւ
այլք) թէ ուրիշ մը՝ այսմ մէկդի կրնայի թողուլ:



ՍԱՅԵՆԱԳՐԱԿԱՆ

ՄԵԹԵՆ ՅՐԳԱՏ

(Հարաւանի էլ)

Ե.

Արշակունեաց հարստութիւնը Հայա-
ստանում վերականգնող եւ առաջին անգամ
քրիստոնէութիւնը պետական կ’որն ճանաչող
թագաւորի անձնաւորութիւնը հարկաւ դար-
գարուած է առասպելական զոյցններով: Թո-
ղոլդիքի երեւակայութեան մէջ Տրդատ երեւան
է գալիս նախ եւ առաջ իբրեւ մի հակա,
օժտուած անսովոր ֆիզիքական ոյժով: Ագա-
թանգեղոսի մէջ՝ շնայելով նրա գրուածքի
վարճագրական բնաւորութեանը՝ պահպանուել
են այդպիսի զոյցնների հետքեր Տրդատի մասին:
Պատմում է՝ օրինակ, թէ ինչպէս մի անգամ
նա, երբ ծառայում էր լիկինիոսի ծոտ, նրա
զօրքի համար պաշար ձեռք բերեց, իստի ահա-
գին խորհրդեր քաղաքի պարիսպներից վար
ձգելով, հանդերձ նոցա վրայ գտնուած պա-
հապաններով ու շներով: Այս քաջութեան
լուր ամեն տեղ տարածուեց, եւ երբ հռով-
մայեցիք պատերազմ ունէին Գոթացի հետ,
Տրդատ հռովմեական կայսեր զգեստներ հագ-
նելով՝ դուրս է ելնում Գոթացի ամեն թա-
գաւորի դէմ մենամարտելու՝ եւ յաղթում է
նրան: Այս անսովոր քաջութեան համար նուէր
է ստանում Տրդատը կայսրից Հայոց թա-
գաւորական թագը՝:

Նրա քաջութեան եւ անվեհերութեան
մասին քանիցս պատմուած է վառ գոյներով,
մանաւանդ թշնամիների դէմ մղած ճակատա-
մարտերում:

Մի անգամ երբ նա պատերազմ կը մղում
Տաշիկների (Արաքսիք) երկրում, Տրդատ
ծանր վիրաւորուած լինելով իջնում է երե-
վանից, ձգում է իր մէջքին նրա ասպազներ,
իւր աննազեներ եւ լողալով անցնում է
Նիքիտա գետը, հետը քարշելով նաեւ իւր
երկվարը:

Հայոց թագաւորի վեթիսարի ոյժը ամենից
պարզ երեւան է գալիս այն նկարագրութեան
մէջ, թէ ինչպէս նա ութ վեթիսարի քաղաք
բարձած ուսին Արարատից բերեց Վաղարշա-
պատ մայրաքաղաքը վկայարանի շինութեան

1 Ագաթանգեղոս, Վեհեւ. էջ 46-49:

2 Նոյն էջ 104, 144, 157:

3 Նոյն էջ 158:

Համար¹: Ճողովորդական երգը նկարագրում է նրան այսպես «իրբե զսէգն Յրգատ, որ սիգալովն աւերեաց զժողովմս գեառոց եւ ցամաքեցոյց իսկ, ի սիգալ իւրում ղյորոճանս ծովուց²»:

Բաց ի վերագրեալն, Ագաթանգեղոս յիշում է, որ Յրգատ Հոռվում եղած միջոցին, իւր պատանկութեան ժամանակ նշանաւոր գանուեց եւ ողիմպիական խաղերում, ցոյց տալով անսովոր արիւթիւն եւ զարմանալի քաղովթիւն³: Գոթարխտարնա չէ հաղորդում եւ ոչ մի դէպք Հայոց թագաւորի այդ քաղովթիւններից⁴:

Գառնանք այժմ խորենացուն: Մեր հեղինակն, որ Յրգատի պատմութեան համար չունէր այլ աղբիւր, բաց ի Ագաթանգեղոսից, թագաւորի նահատակութիւններ ժամին գիտէ նոյն այս աղբիւրից, բայց նկարագրում է նոցա բաւական փոփոխած ձեւով:

Նախ եւ առաջ, նա Յրգատի նահատակութիւնները բաժանում է չրջանների. նահատակութիւններ մինչեւ նրա թագաւորանալը (ՎԼ. 2Բ.), նահատակութիւններ նրա թագաւորանալուց յետոյ, բայց մինչեւ հաւատալը (ՎԼ. 2Բ.) եւ վերջապէս նահատակութիւններ նրա հաւատալուց յետոյ (ՎԼ. 2Ե.):

Ապա օգտուելով Ագաթանգեղոսի անցողակի յիշած ցուցմունքից Յրգատի Ողիմպական խաղերում ունեցած յաջողութիւնների մասին, խորենացին բերում է նրա նահատակութիւններից երեք դէպք, որոնք ինչպէս երեւում է ստուգելուց ամբողջովին փոխ են առած Եւսեբիոսի Ժամանակագրութիւնից (այն է ողիմպիական խաղերում մասնակցող ըմբշամարտների ցուցակից) եւ կախով են նստից:

Այսպէս, ողիմպական խաղերի հիմնադրութեան առթիւ Եւսեբիոս նկատում է, «վասն Ազոնին դնելոյ, որ են մրցութեան հրահանգք... բայց ոմանք զգովանգափն երիստանն մինչեւ ցիփիտոս⁵, որ նորոգեաց զագոնն...»

¹ Նոյն էջ 576:

² Նոյն էջ 103:

³ Նոյն էջ 157:

⁴ Յրգատ եւ Կոստանդիանոս Մեծի մի քանի քաղաքորոմութիւններն նմանութեան պատճառով Միքիթաբեան Հ. Բ. Սարգիսեան եմթաղութիւն է անում, թէ կարելի է դարձի հեղինակը փոխ է առել այդ գրկալածները ժողովրդականութիւն ստացած հռովմայեցի կայսեր պատմութիւնից (տես նրա հետագայ Ագաթանգեղոսի մասին Վճն. 1890, էջ 35):

⁵ խորենացու Թարգմանիկները սովորաբար անձիւք են թարգմանում այս անունը իբրեւ «Պիրթիւս», մինչդեռ այսպէս խոսքը իբրեւստի մասին է (խորենացու մոտ այդ

Ի ղիցն հրամանը ինչ այսպիսիք Պերոպոլիս-ուցոց, մոէք ի մէջեան եւ զոհս մատուցէք...»: Սրանից յետոյ Կեսարիայի եպիսկոպոսը բերում է Տէլափուսն ըմբշամարտների անունները — Ճորգ, ողիմպիականում — «Դերասոս Արգիացի, որ զվճրակ եղինն թափեաց⁶» եւ Ճուէրգում «Եւ ի մարտին Կղիտուտարադոս Խողացի, որ զվէզ եւ եթ կալնալ յաղթէր⁷»:

Իսկ Աղէքսանդրի պատմիչը բերում է մի հետաքրքիր դէպք երիտասարդ արքայալնիկեանից, որը խիստ ցանկանում էր կռաք վաւերել մրցութեան ապարդիւի վրայ եւ անպատուած էր Ալսունանիոյ թագաւոր Նիկողայոսից իւր այս անձնապատան յանգրծութեան համար: Նրան վրէժխնդիր ընելու նպատակով, Աղէքսանդր մտու կառուով ասպարիզ մրցելու, եւ ինքը Նիկողայոսից առաջ ընթանալով, (գիտմամբ) վայր ընկաւ զետին, որպէս զի միջոց տալ իւր հակառակորդին առաջ անցնել, այստեղ Նիկողայոսի ձին ալ կողմից այսլծաքեց եւ կառքը շրջելուց կառավարի հետ միասին. իսկ Աղէքսանդր ամենայն արագութեամբ ընթացաւ Նիկողայոսի վրայ, որը եւ (տեղնուտեղը) վախճանուեց⁸: Կախով են նոյն պատմութիւնից են վերցրած Տրգատին վերաբերեալ «յերկվար կամակար աշտանակեալ⁹» դարձուածքը:

Այնուհետեւ, խորենացու Յրգատի նահատակութիւնների նկարագրելուց ետոյ, առաջ բերած պատմութիւնը Պոսթոս կայսեր ջոյքերի ապստամբութեան մասին, սովի պատճառով եւ նրա սպանումը — խորենացին բառացի փոխ է առել Մաղադասի ժամանակագրութիւնից, նոր մանրամասնութիւններով հանդերձ, օրինակ ինչպէս Տրգատ միայնակ դիմադրեց զինուորների կատաղած ամբոխին, որոնք Լիկիոսի ապարանքի վրայ էին յարձակուում նրան սպանելու: «Ο δέ αὐτός βασιλεὺς Πράβος ἐπολέμησε τοῖς Ἰόδοις ἐν τῷ Σιρμίφ. καὶ ἐν τῷ πολεμῶν αὐτὸν ἐγένετο λίμος κοσμήως μεγας, καὶ μὴ ἐδρεθέντων ἀναλωμάτων ἐστα-

անունը մեք է բերած նախընթաց հազարով Հիփիտոս. կայ եւ վաղ. Հեփիտոս) որ Հեփիտի բնակիչ էր եւ Յունաստանի կառավարիչ (Procurator), որուն են վերագրում ողիմպիական խաղերի սահմանելը: խորենացու Խոսակաւ Cappelletti թարգմանիչը Հիփիտոսը թարգմանում է «Vulcano»:

¹ Արմն. Ա. էջ 132:

² Նոյն էջ 140:

³ Նոյն էջ 142:

⁴ Աղէքսանդրի պատմ. հայ. թարգմ. էջ 26-27:

⁵ Նոյն էջ 16:

σίασεν ὁ στρατός. Καὶ ἐπελθόντες ἔσφαξαν αὐτὸν ἐν τῷ Σιρμίφ...» (p. 302).

Եւսեբիոսի Ժամանակագրութիւնից պիտաւորապէս փոխ են առած Պորուս թագաւորի յարոյր Կարոսի եւ նրա որդւոց Նոմմերիանոսի եւ Կարինոսի մասին եղած տեղեկութիւնները, անսուղջ մանրամասնութիւններով հանգերձ ինքոր Կոսնտինի մասին, որ առաջ է եկել ըստ երեւութի ժամանակագրութեան յոշարէն բնագրի հայ թարգմանչի սխալ ընթերցումից, որը եւ սխալմամբ կրկնել են խորենացին եւ ուրիշներ: Խնդիրն այն է, որ Եւսեբիոսի մօտ 2303 թուականի տակ յիշուած է «ի Կարայ վախճանին ի Միջագետս», Նոմմերիանոսի առ նախա լինէր սպանանել ի Թրակ եւ Կարինոսի նոյնպէս է Կոննակայ պատերազմին¹: Ամենայն հաւանականութեամբ Եւսեբիոսի բնագիրն այստեղ աղաւաղուած է մեջ հասած. Գերոնիմոսի մէջ լատիներէն թարգմանութիւնն այստեղ աւելի մանրամասն եւ ճիշդ ընթերցուածք ունի. Carus Narbonensis cum omni Parthorum regione vastata Chochem et Ctesiphontem nobilissimas hostium urbes cepisset, super Tigrim castra ponens, fulmine (sic!) ictus interit... Carinus proelio victus apud Margum occiditur². Նոյն է հաստատուած նաեւ Սիււնկեղոս. «Κάρος... κεραυνῷ κατασχήφαντος... διαφείρεται...» Եւսեբիոսը մեռաւ կայծակնաճարձիւնով: Եւս հիմամբ նաեւ լատիւրու³ ենթադրեց, որ հայ Ժամանակագրութեան թարգմանիչը բնագիրը շփոթել է, ընդունելով ԿԵՐԱՍՆՈՍ («կայծակ») բառը, հաւանօրէն, աղաւաղուած ԽՐՄԱՃՈՍ բառի պատճառով, յատուկ անուն տեղ⁴:

Սակայն այս ենթադրութիւնը կարօտ է ստույգութեան Գերոնիմոսի եւ Սիւնկեղոսի յիշատակութիւնը կայծակի մասին վերաբերում է Կարոսին եւ ոչ թէ Կարինոսին, որի հետ իսկապէս կապուած է Եւսեբիոսի հայ թարգմանութեան «Կոննակ»⁵: Եւր պատճառով, ինձ թւում է, որ աւելի հիմնաւոր կը լինէր են-

¹ Chron. p. էջ 165:

² Migne, Patrol. Ser. gr. T. XXVII, p. 657.

³ Coll., II, p. 120.

⁴ Տես նոյնպէս. Աւելան, «Ղարբառ», էջ 376. եւ Տաշան Ագաթանգեղոսի մասին, էջ 124. — Սամուէլ Անեցի, ՓԲ գրուո. հայ ժամանակագիրը կրկնելով բառացի Եւսեբիոսին, աւելացնում է նոյնպէս, որ Կոննակ Կարոսի սպանողը, Հայոց խորով թագաւորի, Տրգաւոր Տօր՝ ջորաւորն էր. նա այսինքն ճիւղ տարի... (Հրա. Վաղարշ. էջ 62):

Թագրել, որ «Կոննակ» բառը («ի Կոննակայ պատերազմին») առաջացել է «Μάργος» բառի աղաւաղութիւնից (proelio apud Margum.) — որ Միւսիայի քաղաքներից մէկի անունն է եւ որտեղ ինչպէս Գերոնիմոսից երեւում է Կարինոսը ճակատ մղեց եւ ընկաւ:

Բաց ի սրանից պէտք է դիտել, որ Եւսեբիոսի Հայոց թարգմանութեան մեջ հետաքրքրող հատուածում «Կոննակ», դեռ անձնաորութիւն չէ, իսկ մեր քննութեան նիւթ եղած խորինացոյ միջ հաստատուում — արքայազն Տրգաւոր Սիւնկե իւր թագաւորանալը գտնւում է Կարինոս կայսեր զօրքի մէջ եւ նրա հետ միասին արշաւում է «Կոննակի», վրայ. հետեւապէս թիւ «Կոննակ», ընդունելը իւրեւանձնաւորութիւն, չէր կարող ոչ մի կապ ունենալ Տայ իր հետ, որ ինչպէս ընդհակառակն է երեւում, հաւանօրէն թիւրիմացութեամբ Սամուէլ Անեցոյ մօտ:

Խորենացոյ «Գերոնիմ», բառի ընթերցման վերաբերմամբ, Եւսեբիոսի Ժամանակագրութեան «ի Միջագետս» բառի փոխարէն (վերջինից «Կարայ վախճանեալ ի Միջագետս, հաստատուում»), տես իմ «Հայոց վէպ» էջ 34:

Այստեղ իսկ օգտուում է մեր պատմագիրը Ագաթանգեղոսի բերած Տրգաւոր նահատակութեան նկարագրութիւնից, այսինքն այն միջնափէյով, թէ ինչպէս նա լուրջով անցաւ Եփրատ, — միեւնոյն ժամանակ նա այս դէպքը վերագրում է Կարինոս կայսեր զօրախառ արշաւանքի ժամանակին, որի զօրքում գտնւում էր Հայոց արքայազնը:

Այնքան է ուրիշ, որ ամբողջ ՀԹ գլուխը կազմուած է Եւսեբիոսի հիմամբ, Կեղծ-Կալիսթիներէն եւ Մաղապատի հատուկտոր տեղեկութիւններով հանդերձ: Կարելի է արդեօք այստեղ գտնել հետքեր փոխիլանոսի պատմութեան:

Ոչ աւելի լաւագոյն է նաեւ Տրգաւոր երկրորդ չորանի նահատակութիւնների վիճակը, այն է նրա նահատակութիւնները «ի թագաւորութեանն յառաջ քան զհաւատարմ» (Գլ. 2Բ):

Խորենացին այստեղ եւս օգտուում է Ագաթանգեղոսի անշարկութիւններից Տրգաւոր քաղաքործութիւնների մասին, որ ցոյց է տուել նա իւր թշնամիների դէմ մղած կռիւներում⁶ եւ իր կողմից բերում է նոցա նկարագիրն:

⁵ Ագաթ. էջ 104, 144, 157:

Այսու հանդերձ մի դեպքում նա վկայութեան է կոչում Ս. Գրիգի եղևնեանի եւ Իլյասափի նման նահատակութիւնը (նա ըստ իր արձանագրւոյն իւր նիւզակը երեք հարիւր (մարդկային) վերականգնելիք էր, իսկ մնացեալ երկու դեպքերը (սոցա թուում եւ այն պատմութեանը, թէ ինչպէս Տրդատ Նիղակով քշեց փղերի երամակը) մի տեղից փոխ է առել, բայց թէ զոր տեղից ան-յայտ է:

Բաց ի դրանց Տրդատի հրաւերը բոլոր հիւսիսականներին (այսինքն Հուններին եւ այլոց) եւ Պարսից վրայ յարձակումը կապ ունի Ագաթանգեղոսի հետ (էջ 104) — Տէրութեան իւրաքանչիւր կողմի գլխաւոր զօրավարների (շորա) անունները, փոխ են առած Փաւստոսից — այն է՝ Բագարատ Բագրատունի, Վա-հան Ամատունի եւ Մանանդինը Ուշտունի-իսկ Վրաստանի՝ « առաջնորդ, Մի հրան, ըստ երեւութիւն, Վրաց յետին աւանդութիւններից Վրաց դարձի մասին: Այս մասին մանրամաս-նօրէն կը խօսուի 22 գլխի քննութեան մէջ:

Պարսից գրքերից եւ Փերսիլեանոսից յե-տոյ, խորենացու երրորդ աղբիւրն է — Ար-տիթէս: Նրանք է վերագրուում նամակի ձեւով գրուած համառօտ պատմութեանը Ս. Գրիգորի եւ նրա որդւոց ծննդեան եւ կենսոյ մասին, գրուած Մարկոս Եգգուռնացի միայնաւորի խնդրանքով: — « Եպիստարտութիւն սակաւութեան եւ վարուց Գրիգորի եւ որդւոցն, ի թղթոյն Արտիթէսի եպիսկոպոսի, որ վասն հարցման Մարկոսի միայնաւորի ի Եգգուռ-նանիս (Գլ. 2):

Մեր պատմիչը հասկացնել է տալիս, թէ նա նոյն այս աղբիւրից է քաղել իր պատմու-թիւնը Անակի Հայաստան գալու եւ Ս. Գրի-գորի յղութեան մասին Արտաշ գաղտում թա-դէս առաքելի գերեզմանի մօտ (Գլ. 27):

Այս երկու գլուխը միշտ ներկայացնում էին քննադատութեան համար մեծ դժուարու-թիւններ, ո՞վ է այդ Արտիթէս եպիսկոպոսն, ինչ է նշանակում միայնաւոր Մարկոս եւ Եգգուռնանը ի՞նչ տեղ է. սոքա միջնեւ այսօր իսկ մնում են անբացատրելի:

Արտիթէս, գուցէ նոյն անձն է, որի մասին յիշատակում է Ագաթանգեղոս 12 երիտա-սարգ եպիսկոպոսների թուում, որոնց ձեռնա-գրեց Ս. Գրիգոր քուրմերի դասակարգից, սա-կայն նրա պատմական աշխատութեան մասին ոչ մի տեղ չէ յիշում: Փաւստոսի յիշած Արտիթ (Գ գարու վերջը) հազն թէ նոյն անձն լինի,

Փաւստոս սրան կոչում է Գոնիէլի աշակերտ (որը ըստ կարգին եղել է աշակերտ Ս. Գրի-գորի), որ ապրում էր Տրդատ Մեծի թու Տիրոն թագաւորի ժամանակ. հետեւապէս այս Արտիթը չէր կարող եպիսկոպոս լինել Ս. Գրի-գորի ժամանակ:

Մարկոսի դեռ եղբ. Վեստանները նոյնա-ցրին Սողոմոնոսի յիշած Մարկոս անապատա-կանի հետ (VI, 29), բայց թէ որքան այդ հաւաստի է, եւ չեմ յանձն առնուլ դատել: Նոյն եւս պիտի նկատեմ նաեւ « Եպիստոմոսի, մասին:

Թէ խորենացին այս գլուխները կազմելու ունէր ինչոր աւանդախառն մի աղբիւր, որ կազ-մած էր ըստ ամենայն հաւանականութեան, Ագաթանգեղոսի՝ հիմամբ եւ հաղորդում էր յիշեալ մանրամասնութիւնները Ս. Գրիգորի կենսից (Գլ. 2), — երեւում է, նախ « կողմն գամաց» (կապագովկայի) նշանակութեամբ) աստուածքից, որ գործ է ածուած միայն այս գլխում, մինչդեռ միւս բոլոր դեպքերում Մով-սէս գործ է ածում « կապագովկիս» անունը, եւ երկրորդ Զենոքի պատմութիւնից, որի հեղինակն ունէր ձեռքից միեւնոյն աղբիւրն եւ օգտուում էր նրանից աւելի լայն չափերով, քան խորենացին: Այսպէս, բայց մեր պատմիչ յիշած յատուկ անուններից — Ս. Գրիգորի սանտուի, նրա ա-մուսնոյ եւ հոր, նաեւ նոյն Գրիգորի աներով, նրա կնոջ եւ նրա որդու Արիստակէսի ուսուցչի, — Զենոքը առաջ է բերում հետաքրքիր տեղե-կութիւններ. 1. չենաց թագաւորի անշնորհ միջամտութեան մասին չայց խորով թագաւորի առաջն, սրան Արտաշիր Սասանի հետ հաշ-տեցնելու նպատակով՝ 2. Այն մասին, թէ ինչ-պէս Բուրդար Պարսիկը դուրս եկաւ Պարս-կաստանից Ան ալի այս տեղից դուրս գա-լուց ան միջնապէս յետոյ եւ հասաւ Արտաշ (ուր տեղի էր ունենում Ս. Գրիգորի յղութիւնը), իսկ յետոյ արդէն ուղեւորուեց կապագովկիս (Զենոք նոյնպէս գործ է ածում այստեղ « Գամիլըն »¹, այն մասին, թէ Բուրդար

¹ էջ 639-641:

« Իմ հետազոտութեան մէջ Զենոքի մասին (Վիեն-նա 1893 թ.) Զենոքի եւ խորենացու մէջ եղած նման հա-տուածներն եւ վերագրում էի վերջինիս անմիջական աղ-գեցութեան. բայց ներկայումս խորենացու պատմութեան նոր լուսարարութեան պատճառով, եւ թոյլ եմ տալիս երկնաբնութ, որ գոյութիւն ունէր մի ընդհանուր աղբիւր, որից օգտուել են երկու պատմիչները. իւրաքանչիւր ըստ իր հայեցողութեան:

² Վիեննա. հրատ. էջ 21:

³ Նոյն էջ 21:

սպրեց Կեսարիայում մէկ տարի. 3. որ Բուր-
գար կամենալով վերագառնալ իր կնոջ հետ
պարտկաստան, իւր անհրաժեշտ արգելեց Սյրա-
պատեան գաւառում եւ կանգ առաւ
Վաղարշապատում. 4. որ Ս. Գրիգորի
մայրը կոչոււմ էր Ռգոհի. 5. որ Նորա Սու-
րէն եղբայրը գայեակներէ ձեռքով
ազատուեց եւ տարուեց պարսից
դուռը (այս հաստատում է եւ Սերէոս էջ
36), ուր եւ սնուեց իւր հօրաքրոր
Խոսրովուհու մօտ, որ Հեփթաղաց
Ջիվանշիր թագաւորի կէնն էր. 6. որ
Սուրբէն իւր հօրաքրոր մօտ տասը
տարի մնալով գնաց Չինաստան եւ
այն տեղ թագաւորեց¹. 7. որ Ս. Գրիգոր
Կեսարիայում մտաւ զպրոց եւ սովո-
րեց Սուրբի եւ յոյն լեզուները. 8. որ
Հիւսիսականների Գեղրեհնե թագաւորը ձգեց
իր պարանը Տրդատի վրայ նրան սպանելու նպա-
տակով, բայց Հայոց թագաւորը Գեղրեհնեին
իւր ձիւս հետ միասին միջոց կէս արաւ²:

Խորենացին իբրեւ աւելի լուրջ պատմիչ՝
զգուշացել է օգտուիլ իւր աղբիւրներէ շատ
առասպելական մանրամասնութիւններով, բաւա-
կանալով իր կարծիքով ինչ որ առւել է ան-
հրաժեշտ եւ կարեւորը, սոցա թուում Ս. Գրի-
գորի Արտազ դաշտում յղանալու պատմու-
թեամբ:

Այս յետին աւանդութեան մասին պէտք
է դիտել, որ ոչ միայն Ագաթանգեղոս ոչինչ
չմտնէ չհաղորդում, այլ մինչեւ իսկ նրա պատ-
մածները հակասում են այդ (աւանդութեան)
վկայութեան: Հայոց դարձի պատմութիւնից
(էջ 37) երևում է, որ Ս. Գրիգորի հայրը,
Անակաթարթեան, եկաւ Հայաստան իւր չար դի-
տաւորութիւնը ի կատար անելու նպատակով
իր եղբոր, Կնոջ եւ որդւոց (sic) հետ. հետեւա-
պէս Անակի այն «երկու մանուկները», որ ա-
զատուեցին թագաւորի սպանողի ցեղը ջնջելու
ժամանակ (էջ 41) ծնուել էին դուր Գարսկաս-
տանում, եւ ոչ թէ Հայաստանում, ինչպէս
Խորենացին է հաստատում, ուր Անակ Ագա-
թանգեղոսի վկայութեամբ մի քանի ամիս միայն
մնաց — ձմրան վերջը եւ գարնան սկիզբը: Վե-
րագրելով Լուսաւորչի յղութիւնը նրա հօր
Հայոց թագաւորութեան սահմանները մանելու
ժամանակին, Մովսէս սրա հետ միասին ասի-

պուած է այս կարճ ժամանակը ձգել մինչեւ
երեք տարի, որպէս զի միջոց ապ երկու մա-
նուկների ծննդեան:

Ի վերջոյ աւելորդ չէ նկատել, որ քննա-
դատութեան նիւթ եղած գլուխը (2) կազմելիս
մեր հեղինակն երկու անգամ օգտուում է Գր.
Նաղիանգեղոց, փոխ առնելով նրանից հե-
տեւեալ ինքնուրոյն դարձուածները. «որպէս
կամք են ասել իմի բանի»³, «ոչ զհետ ընթա-
նայր (Բարսեղ) զպատուին, այլ պատին զկնի
գայր»⁴:

Նոյն աւանդախառն աղբիւրից է քաղած,
ըստ երեւութի եւ Տրդատի վերջին նահատա-
կութիւնն. որ նա կատարել է հաւատարմաց
յետոյ (Գլ. 26), այն է — «նահատակութիւն
Տրդատայ ի պատերազմին յԱղուանս, յորում
միջակտուր արար զթագաւորն Բասլաց», Այս
պատմութիւնը ինչպէս յայտնի է, բաւական մօտ
սիշեցնում է Զովսեպոս Փլաւտին⁵, որը հա-
ղորդում է նման մի դէպք Ներսէն ժամանա-
կակից Հայոց համանուն թագաւորին պատահած
Ալաններէ Մարաստան եւ Հայաստան ար-
շաւելու ժամանակ: Ինչպէս մենք տեսանք, Մով-
սէսի եւ Ջնեորի ընդհանուր աղբիւրը յիշում է
Հիւսիսականների թագաւոր Գեղրեհնեին, սա-
կայն այս վերջինս Խորենացու մօտ փոխած է
Բասլաց թագաւորի, որ ժամանակի կանխումն
(anachronism) է ներկայացնում, որովհետեւ
այդ ազգը պատմութեան մէջ յիշում է միայն
Զ քրիստոսի յետ քրիստոսի:

Բաց ի դրանից պէտք է դիտել, որ Վրաց
Միհրան թագաւորին յատկացրած է աւելի մի
համետ վիճակ, քան ունէր իսկայպէս. նա այս-
տեղ ներկայանում է Հայոց չորս զօրապետ-
ներից մէկը, որոնց նշանակել էր Տրդատ եւ
կոչուած է «Առանորդ Վրաց»⁶:

Վերջին աղբիւրն, որից Խորենացին քաղում
է իւր պատմութիւնը Բ քրքի մնացեալ տասն
գլուխների համար (25, 24, 27, 28—ՎԲ) է
— «բանք արանց իմաստունց եւ հնարաւ սիրա-
բանից» ինչպէս ասում է մեր պատմագիրը
(Գլ. ՀԵ): Դժուար չէ մակարեւել, որ այդ

¹ Ցես իմ քննադատութիւն. «Մ. Խորենացի եւ իւր
աղբիւրներ», — Գր. Նաղիանգեղ (Խորենացու եւ Նաղիան-
գեղու 46 համամասական զուգընթաց տեղերը) Աբարտ
1898 Նոյնմ. Դեկտ. եւ առանձն. արտատպ. էջ 11):

² Ճառա առ «Բարսեղ», Վիենն. Միւ. ձեռ. Բ. 217
էջ 140a:

³ Երբայեցի պատմիչ բուն պատմութիւնը (Bel
jud. VII, 7, 4) շահագործել է մեր հեղինակը Աբարտուս Բ-ի
պատմութեան համար: Ցես իմ «Հայոց Վէպ», էջ 244—245:

⁴ Ցես նոյնպէս մեր պատմագրի Գ քրքի Զ գլուխը:

¹ Նոյն էջ 22:

² Նոյն էջ 46—47:

«Իմաստուն Տնախօսները» պետք է յոյներ լինէին, բայց թէ շէք. յայտնի չէ. Խորենացին չէ յիշում յականէ անուանէ եւ ոչ մէկին նոցանից. ես ասում եմ «յոյներ» են, որովհետեւ Խորենացին Հայոց մէջ չէ ընդունում Տնախօսութեան գոյութիւն (Գ. Ա.):

Կանգ առնենք նախ ԱՆ եւ ՁԻ գլուխներին վրայ, որտեղ պատմում է Մամիկոնեան իշխանութեան ծագումը եւ Սելուկեաց ցեղի ստատկումը Մամիկոնէից նահապետի ձեռքով:

Անցողակի նկատենք, որ հազիւ թէ որեւէ յոյն Տնախօս-սիրաբաններ կարողանային իմանալ հայ նախարարութիւնների ծագման եւ աւելի պակաս նոցա մէջ եղած երկպառակութիւնների մասին, Խորենացին, ըստ սովորութեան, թաղցնում է իւր իսկական աղբիւրը, որը սակայն մենք կ'աշխատենք գտնել:

Թէ գոյութիւն ունէր ինչը աւանդութիւն Մամիկոնեանների չինական ծագման մասին, այդ մասին յիշում են մի քանի անգամ իրենք՝ այդ ցեղի իշխանները դեռ Դ դարում: Փաւստոսի մէջ այդ աւանդութիւնը գրւում է Պապ թագաւորի բերանը (Ե, 4), իսկ Մանուէլ Մամիկոնեան մինչեւ իսկ Տամառոս Տաղորդում է իրենց ցեղի Չինաստանից գաղթելու ստիպողական պատճառի եւ Հայաստանում հաստատուելու մասին. «մեր չեմք իսկ լեալ ձեր ծառայք, այլ ընկերք ձեր եւ ի վերայ քան զձեզ. զի մեր նախնիքն լեալ էին թագաւորք աշխարհին ճեւնաց, եւ վասն եղբարց իւրեանց գրգռութեան. զի արիւն մեծ անկեալ է ի վերայ, վասն այնք եմք զնացեալք, եւ վասն ճարւոյ Տնագատի գտանելը» եկեալ զգաբարեալ եմք» (Ե. Ա.):

Խորենացու պատմման ոչ բոլորովին համապատասխանում է Փաւստոսի այս Տամառոս Տաղորդածին, որի մտ առանձնապէս չնշուած են, նախ Մամիկոնեանների թագաւորական ծագումը եւ Բ. դ. մեծ արիւն հնչողութիւն, որն ամենեւին չէ յիշում մեր պատմիչը: Վերջինս ամենայն հաւանականութեամբ, օգտուել է տոհմային աւանդութիւններից, որոնց ընդունելով հաւանական է եւ այն խմբագրութիւնից, որ բերած է Սերէոսի¹ յառաջարանի մէջ եւ

որն աւելի համաձայն է Փաւստոսի պատմութեան. Խորենացին միայն կրճատել է նրան եւ մի քիչ փոփոխել, հարկաւ ոչ յօգուտ Մամիկոնեանների: Այս խմբագրութիւնը վերաբերում է ոչ ուշ քան Զ եւ Է դարերը:

«Մամիկոնեանք ոչ են որդիք աղգածնին Արամանեայ, ասում է այդ աւանդութեան մէջ, այլ են եկեալ ի ճինաստանէ յամա Արտաւանայ արքայի Պարթեւաց եւ մինն Խորոս վու արքայի Հայոց. որպէս լուայ¹ յառնէն մեծէ, որ եկեալ էր հրեշտակութեամբն ի ճեւնաց թագաւորէն առ արքայն Խորով². Եւ իմ հարցեալ ի դրանն արքունի, իմէ անգգ մի մեծ ի Հայաստան երկրի կայ՝ զորմէ ասեն, իմէ ի ձերմէ աշխարհէն գնացեալ են: Եւ նա ասաց ինձ. ասեն, ասէ, գուռանք եւ ի մերում աշխարհին Եւրգս իւրեանց զՄամիկն եւ զԿոնակն³, արս երկուս լեալ քաջ եւ զխաւոր եղարս հարազատս, որդիք Կառնեմայ Լուխարարին, որ էր երկրորդ ի թագաւորութեանն ճինաստանի: Որոյ յետ մահուանն առնս այսորիկ, առ զկին սորին թագաւորն նոցին ի կնութիւն: Եւ եղեւ ի նմանէ որդի, որ զկին մահուան հաւր իւրոյ յարդեալ նստաւ յաթոն հայրին⁴ թագաւորութեանն: Եւ նոցա երկու եղբարք նորա ի մարէ եւ ոչ ի հաւրէ ապտամբեալ ի բաց կացին ի նմանէ եւ միարանեալ ընդ ինքեանս զմասն մի ի նախարարացն եւ ի զաւարացն, առնեն ուխտ միարանութեան: Որոց խորհեալ խորհուրդ չարութեան սպանանել զեղբայրն իւրեանց զթագաւոր աշխարհին Ճեւնաւակուն¹ եւ առնուլ զթագաւորութիւն նորա: Եւ զաւարածողը լինէին Մամիկն եւ Կոնակն ի վերայ նորա ի միում անուղղ աշխարհին իւրեանց, եւ բաժանի զաւր աշխարհին յերկուս: Ազգ լինի Ճեւնաւակունի, գուճարէ եւ նա զղաւթ իւրոյ կողմանն եւ գնաց ի վերայ նոցա ի պատերազմ: Եւ յարձակին ի վերայ միմեանց, հարկանեն սրով սուսերի եւ սպառեն զղաւթն

¹ Սերէոս կամ մի այլ ժամանակակից:

² Ամենայն հաւանականութեամբ Խորովը Փարսից (590—628):

³ Փաւստոսի մէջ յիշում է Կոմս Մամիկոնեան (Ե, 37.), Կոն եւ Կոնակ վարիստներով: Ս. Ներսէսի պատմութեան մէջ («Սոփեթ», 2, էջ 68):

⁴ Այս անուամբ կոչում է Շիրակացին (Ճեւնաց կոչւոր) (Աշխարհագրութիւն, էջ 616) եւ Դեմոնդ, էջ 38, նաեւ արաբացի պատմիչները: Այս բառի ստուգաբանութեան մասին — չեն (Ճեւնաց) եւ Փակ-Փուր կամ Բակ-Քուր (աստուծոյ որդի) տես Զ. Պատկանան, Վրաց ժամանակագրութեան մասին, լուստ. Նախար. ամսագր., հատ. 230, էջ 262:

1 Բ. Պատկանանի հրտ. մէջ էջ 12, առջ 1-ին «պայառար նորին, բառերից յետոյ վերջէն եւ գրուած, որ առաջին հրտ. մէջ (Կ. Պոլս) էջ 28 — չկայ: Մինչդեռ վերջակէտը պէտք է գրուած լինի սերինադուն (փոք. աս. բնական) բառից յետոյ, որտեղ վերջնական է Եւզգիկից փոք. առան հատուածը (էջ 32, հրտ. Պոլս): եւ արդուս է սրան հետեւող պատմածքի, Մամիկոնեանների մասին, վերջապէս, ըստ երեւութիւնի գրիչներից աղապարած:

ապստամբական: փախստական լեալ Մամիկնե
եւ Կոնստնդնոսն առ արքայն Արշակունի, որ
նստեր ի Բահլ Հասաստանի յերկրն Գուշա-
նաց, եւ էր խաղաղութիւն ի մէջ երկոցունց
թագաւորութեանց այնոցիկ: Յայժմամբ մեծաւ
աղերսւ ինչքեալ զնոսա շինքակորի յար-
քայն Պարթեւաց: «Ձի բարձցէ ի միջոյ ապա
թէ ոչ լուծցի ուխտ խաղաղութեան, որ ի միջի
մերում», իսկ նորա խնայեալ յարսն, ոչ ետ
զնոսա ի ճնդս նորա, այլ գրէ առ նա սիրով:
«Անդէն ուխտ խաղաղութեան մերոյ, ասէ,
Հաստատուն կացցէ ի միջի մերում, զի երդունալ
եմ առ նոսա, զի նքա մի մեոցին, այլ ետու
տանել զնոսա ի մուտս արեւու եւ յեզր եր-
կրի՝ ի տեղին յայն որ (եւ կարգում եմ՝ ուր)
արեւակն ի մայր մասնէ», Յայժմամբ չրամայլ
արքայն Պարթեւաց զաւրաց իւրոց տանել զնոսա
զգուշութեամբ մեծաւ՝ կնաւ եւ ուղովքն իւ-
րեանց եւ ամենայն աղիսիւն իւրեանց յեր-
կրն Հայոց առ աղգական իւր՝ արքայն Արշա-
կունի, որ էր թագաւոր Հայաստան երկրն, ուր
եւ սերեալ բազմացան յոյժ եւ եղին յազգ մեծ
ի Մամիկունայ եւ ի Կոնստնդնոսն: յայժմանէ
այն եւ ապարսպ ետ»:

Խորենացու մացրած փոփոխութիւններն
թուամբ պէտք է յիշել պատմութեան ուր ոգ էլը,
որ յարմարեցրած է ոչ Արտաւանի եւ Խոսրովի,
այլ ինչպէս երեւում է Սերէոսից Սասանեան
Հապուհի եւ Խոսրովի որդի Տրդատի՝ ժամա-
նակին:

Բաց ի յիշեալ աղբիւրից Խորենացին նոյն
ՉԱ գլխի համար օգտուել է Էրեբրանցու՝ աշ-
խարհագրութիւնից, այն է Զինաստանի եւ
Նեղկաստանի նկարագրից: Ահա այդ հատուածը.
«Վնի ի ծննաց աշխարհին դարիճնիկ եւ հո-
շիբոսկ եւ բուիճնիկ եւ կասիմն եւ սրիկոն:

1 Ա. Ե. Տր. էջ 615—616:

ուէր եւ հրէշ եւ մուշ եւ սիրամարգ շատ,
քրքում՝ անքաւ, ապրիշում շատ եւ ազ-
նիւ...»

Անցնելով յարդդ — ՉԴ գլխին Սկու-
նեաց նախարարութեան սատակման եւ նոցա
կալուածների Մամիկոնեանների ձեռքն անցնելու
մասին, հարկ եմ համարում դիտել, որ այդ
պատմութիւնն, եթէ չէ փոխ առած յետին
սոհմային աւանդութիւններից, ուրեմն կազ-
մուած է Խորենացու ձեռքով: Խնդիրն այն է, որ
Սկուռնի նախարարական տունը հին պատմիչները
չեն յիշում — ոչ Ագաթանգեղոս, ոչ Փաւս-
տոս եւ ոչ Ղ. Փարպեցի: Եթէ Ագաթանգեղոսի
լուծութիւնը Սկուռնեաց մասին մի կերպ կարելի է
բացատրել, սակայն Մամիկոնեան տան այդչափ
նշանաւոր սխարագործութեան չյիշելը նոցա
սոհմային պատմիչների կողմից, հազիւ թէ հաս-
կանալի լինի:

Ահա թէ ինչու կասկած է առաջ գալիս՝
ոչ միայն ՉԴ գլխի հաւաստութեան վերա-
բերմամբ, այլ եւ այն ամէնի, ինչոր Խորենացին
հաղորդում է Սկուռնեաց նախարարութեան
մասին, այն է՝ նոցա նահապետ «Գծնեայ Սլաքի»,
մասին (Բ գիրք ԳԼ Ը.), որ դեռ Վաղարշակի
ժամանակ նշանակուեց արքայական որսորդու-
թեան գլուխ, Սլուկի մասին, որ ապստամբուեց
Տրդատի դէմ, նաեւ Տարսն գաւառի այս նա-
խարարութեան պատկանելու մասին, իբրեւ
սոհմային կալուածք: Մի բան միայն անկաս-
կած է, որ Հայաստանում գոյութիւն ունէր մի
նախարարութիւն Սկուռնի կոչմամբ — որն ինչ-
պէս երկրորդական նախարարութիւն հազիւ թէ
մի բանով հոգակուեց: Սկուռնի յիշում է մի
անգամ միայն Եղիշէի մէջ (էջ 77) երկրորդա-
կան նախարարների շարքում. Գահ-Նամակում
նորա 48-րդ տեղն են գրաւում:

(Հարաւանիկի)

Գ. ԽԱՆԱԹԵԱՆԻ:
թաթու. Ա. ՍԱՐԿ.

